Պարունակում է մրցութային գաղտնիք

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 48

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի 2009թ. դեկտեմբերի 18-ին ժամը 15:00-ին ՀՀ Կառավարության նիստերի դահլիճում կայացած նիստի

Նիստը նախագահում էր.

ՀՀ Վարչապետ, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը

Մասնակցում էին՝

Կառավարման խորհրդի անդամներ.

Արմեն Գևորգյանը	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Տիգրան Դավթյանը	ՀՀ ֆինանսների նախարար
Գերասիմ Ալավերդյանը	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Գուրգեն Սարգսյանը	ՀՀ տրանսպորտի նախարար
Մուշեղ Թումասյանը	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Արման Ոսկանյանը	«Տավուշի զարգացման» ՀԿ-ի ներկայացուցիչ
Շիրակ Միքայելյանը	«Աշխատանք և հայրենիք» ՀԿ-ի լիազոր ներկայացուցիչ
Վիկտոր Ենգիբարյանը	«Հայաստանի եվրոպական շարժում» ՀԿ-ի նախագահ
Լիլիթ Ասատրյանը	«Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդ» ՀԿ-ի նախագահ Պողոս Շահինյանի լիազոր անձ

Կառավարման խորհրդի դիտորդ.

Ալեքս Ռասինը	Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի տնօրեն

Նիստից բացակայում էին.

Վահրամ Ներսիսյանցը	ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի փոխնախագահ
Ներսես Երիցյանը	ՀՀ էկոնոմիկայի նախարար

Կարեն Զադոյանը	«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ
Պողոս Շահինյանը	«Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդ» ՀԿ-ի նախագահ
Ռուբեն Խաչատրյանը	«Հայաստանում վայրի բնության և մշակութային արժեքների պահպանության» հիմնադրամի տնօրեն, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի բնապահպանական դիտորդ

Նիստին հրավիրված էին.

Դավիթ Սարգսյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Անդրանիկ Անդրեասյանը	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ

Նիստին մասնակցում էին նաև.

Արա Հովսեփյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն
Նորա Մարտիրոսյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու, կառավարման խորհրդի քարտուղար
Արամ Անանյանը	ՀՀ Վարչապետի օգնական
Սիմոն Ղոնաղչյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետ
Ռիմա Եգանյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության առաջատար մասնագետ
Մարինա Քուշքյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի արձանագրային բաժնի աշխատակից
Տիգրանուհի Բաղդասարյանը	Թարգմանիչ

Նիստը բացեց ՀՀ Վարչապետ, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը:

Նիստի օրակարգում ներկայացվել էին հետևյալ հարցերը.

1. ՀՀ ոռոգման և դրենաժի հայեցակարգի քննարկում և հաստատում:
2. ՀՄԿ-ին ներկայացվող 14-րդ Հատկացման հայտի և դրան կցվող փաստաթղթերի քննարկում և հաստատում:

3. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի շահառուների խորհրդի առկա իրավիճակի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում:

4. Այլ հարցեր:

   ա/ «Արարատյան հարթավայրի դրենաժային համակարգի վերականգնում» IA/CB/CW-08/008 պայմանագրի նախագծի քննարկում և հաստատում:

   բ/ «Երրորդ կարգի ջրանցքների վերականգնում (Փաթեթ I)» IA/CB/CW-08/004 պայմանագրի նախագծի քննարկում և հաստատում:

Օրակարգը հաստատվեց միաձայն:

Օրակարգին կից ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կողմից կառավարման խորհրդի անդամներին ներկայացվել էր նաև յուրաքանչյուր հարցի վերաբերյալ համապատասխան տեղեկանք՝ կից փաստաթղթերով:

Նիստի ընթացքում.

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանն առաջարկեց նախ ներկայացնել օրակարգի 3-րդ հարցը:

Օրակարգի 3-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արա Հովսեփյանը տեղեկացրեց, որ ի կատարումն 2009թ. դեկտեմբերի 2-ին կայացած ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի հանձնարարականի՝ ՀՄՀ-Հայաստան ծրագրի շահառուների խորհուրդը (այսուհետև՝ ՇԽ) ստեղծել է 6 ՇԽ անդամներից բաղկացած հանձնախումբ ՇԽ ներքին խնդրահարույց հարցերը քննարկելու և լուծումներ առաջարկելու նպատակով: Քննարկումների արդյունքում ՇԽ ընդունել է հետևյալ որոշումը՝ «ՇԽ-ն իրականացնում է կառավարման խորհրդի անդամների նոր ընտրություններ, որի արդյունքում ընտրված հինգ անդամները դուրս են գալիս ՇԽ կազմից և ՇԽ-ը համալրվում է ևս հինգ անդամներով՝ առավել ձայներ հավաքած ՇԽ անդամության թեկնածուների ցանկից»:

ՀՀ Վարչապետը հարցրեց, թե ե՞րբ են իրականացվելու այդ ընտրությունները:

Արա Հովսեփյանը պատասխանեց, որ ընտրությունները կիրականացվեն, երբ կառավարման խորհուրդը և ՀՄԿ-ն իրենց հավանությունը տան ընդունված որոշմանը: ՀՄԿ-ն արդեն իսկ տեղեկացված է առկա լուծման մասին, սակայն դեռևս հայտնի չէ վերջինիս պաշտոնական դիրքորոշումն այս հարցի կապակցությամբ:

ՀՀ Վարչապետը ողջունեց ՇԽ որոշումը, նշելով, որ ցանկացած բարդ իրավիճակի խաղաղ լուծում, որը բխում է քաղաքացիական հասարակության շահերից, ողջունելի և ընդունելի է:

Քննարկումներից հետո **<u>միաձայն</u> որոշվեց՝** հավանություն տալ «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի շահառուների խորհրդի կողմից ընդունված որոշումը:

Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ 2009թ. դեկտեմբերի 2-ին կայացած ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նիստի ընթացքում տրված հանձնարարականի համաձայն ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Խորհրդատուն վերանայել է Ոռոգման և դրենաժի հայեցակարգի (այսուհետև՝ Հայեցակարգ) վիճելի կետերը՝ քննարկելով բոլոր շահագրգիռ կողմերի հետ:

Քննարկումների արդյունքում կառավարման խորհրդի հաստատմանն է ներկայացվել Հայեցակարգի վերջնական տարբերակը:

ՀՀ Վարչապետը հարցրեց, թե արդյո՞ք հարկային արտոնությունների տրամադրման մասով ուսումնասիրվել է միջազգային փորձը:

Արա Հովսեփյանը պատասխանեց, որ Հայեցակարգի հաստատումից հետո մոտակա վեց ամիսների ընթացքում նախատեսվում է նաև Ոռոգման և դրենաժի ազգային քաղաքականության և ռազմավարության հաստատումը, որի ընթացքում մանրամասն կուսումնասիրվի և հաշվի կառնվի նաև նշված հարցը:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը նշեց, որ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը հանձնարարականը կատարել է, որը վկայում է այն մասին, որ բոլոր շահագրգիռ կողմերի համաձայնությունը ձեռք է բերված:

Արմեն Գևորգյանը նշեց, որ ի սկզբանե նախապայմանի բավարարման համար ՀՄԿ-ն ակնկալում էր Հայեցակարգի հաստատումը համապատասխան լիազոր մարմնի կողմից, սակայն կառավարման խորհուրդը որոշում է կայացրել հաստատել Հայեցակարգը, իսկ Ոռոգման և դրենաժի ազգային քաղաքականությունը և ռազմավարությունը վերջնական տարբերակով ունենալուց հետո, որը նախատեսվում է 210թ. հունիս ամսին, ներկայացնել ՀՀ կառավարության հաստատմանը:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի կողմից Հայեցակարգը հաստատվելուց հետո այն կներկայացվի նաև ՀՀ տարածքային կառավարման ջրային տնտեսության պետական կոմիտեի հաստատմանը:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց՝** հաստատել ՀՀ ոռոգման և դրենաժի հայեցակարգը:

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ 14-րդ հատկացման հայտով ՀՄՀ-Հայաստանն ակնկալում է ՀՄԿ-ից ստանալ 11,689,613 ԱՄՆ դոլար, որի 10,719,834 ԱՄՆ դոլարը, ուղղվելու է Ոռոգվող գյուղատնտեսություն ծրագրի ֆինանսավորման համար:

Կատարման նախապայմանների վերաբերյալ Արա Հովսեփյանը հայտնեց, որ առկա է մեկ նախապայման, որը բավարարված չէ և այն վերաբերում է Ոռոգման համակարգի պահպանության համար պետական բյուջեից կատարվող հատկացումներին, որը 2010թ. բյուջեով նախատեսված չէ: Այս նախապայմանի կատարման համար ՀՄՀ-Հայաստանը ՀՄԿ-ից 1 տարով բացառության կարգով հետաձգում է խնդրել՝ պայմանով, որ տվյալ նախապայմանը կբավարարվի հաջորդ տարում՝ համապատասխան գումար՝ նվազագույնը 1,5 մլրդ ՀՀ դրամ, նախատեսվելով 2011թ. բյուջեում:

Անդրադառնալով գնումների պլանին Արա Հովսեփյանը հայտնեց, որ գնումների պլանում ավելացել է նոր տող, որը նախատեսում է համապատասխան տեխնիկական աուդիտորի ներգրավում: Տեխնիկական աուդիտորն իրականացնելու է ոռոգման բաղադրիչի շրջանակներում իրականացված շինարարության որակի աուդիտ:

Հարցը ներկայացնելուց հետո **միաձայն որոշվեց՝** հաստատել ՀՄԿ-ին ներկայացվող 14-րդ հատկացման հայտը և դրան կցվող փաստաթղթերը:

Օրակարգի 4-րդ հարցի ա/ կետը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հարցրեց, թե ի՞նչ արժույթով են կատարվելու կապալառուի վճարումները:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ վճարումները կատարվելու են ՀՀ դրամով:

Արա Հովսեփյանը տեղեկացրեց, որ առաջիկայում նախատեսվում է նաև իրականացնել Արարատյան հարթավայրի դրենաժային համակարգի վերականգնման երկրորդ փաթեթի մրցույթը: Այդ փաթեթով նախատեսված աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ է մոտ 38 հա հողի հատկացում՝ ժամանակավոր և մշտական օգտագործման համար:

Արմեն Գևորգյանն ավելացրեց, որ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի աշխատակիցներն այս հարցն ավելի մանրամասն ուսումնասիրելուց հետո պետք է ներկայացնեն համատեղ քննարկման, որի արդյունքում հնարավոր է, որ առաջ գա հողի առգրավման խնդիր, որի համար փոխհատուցումը պետք է կատարվի ՀՀ պետական բյուջեի միջոցներից:

Քննարկումներից հետո **<u>միաձայն</u> որոշվեց՝** հաստատել «Արարատյան հարթավայրի դրենաժային համակարգի վերականգնում» IA/CB/CW-08/008 պայմանագրի նախագիծը:

Օրակարգի 4-րդ հարցի բ/ կետը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արմեն Գևորգյանը հայտնեց, որ այս բաղադրիչի շրջանակներում շինարարական աշխատանքների իրականացման համար նախատեսված է համայնքների կողմից 15 տոկոս համաֆինանսավորման պահանջ: Ներկայումս համայնքներն ունեն համաֆինանսավորման խնդիր, որն ունի երկու պատճառ. նախ՝ շինարարության արժեքը միջինում մոտ 70 տոկոսով բարձր է ստացվել կանխատեսված գնից և 2-րդ՝ ֆինանսական ճգնաժամի արդյունքում համայնքները հայտնվել են ծանր ֆինանսական դրության մեջ:

Արմեն Գևորգյանն ավելացրեց, որ ներկայումս, հաշվի առնելով ֆինանսական ճգնաժամը, ՀՀ կառավարությունը բանակցում է դոնոր կազմակերպությունների հետ՝ համայնքների համաֆինանսավորման տոկոսը նվազեցնելու ուղղությամբ: Օրինակ՝ Սոցիալական ներդրումների հիմնադրամի կողմից իրականացվող Համաշխարհային բանկի ծրագրի շրջանակներում նախատեսված էր 10 տոկոս համաֆինանսավորում, որը բանակցությունների արդյունքում իջեցվել է մինչև 5 տոկոս: Նույնատիպ քննարկումներ են իրականացվում նաև այլ միջազգային կազմակերպությունների հետ:

Արմեն Գևորգյանն առաջարկեց պաշտոնապես դիմել ՀՄԿ-ին՝ համայնքների համաֆինանսավորման տոկոսը նվազեցնելու համար:

Ալեքս Ռասինը հայտնեց, որ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը և նախագծող կազմակերպությունն ամեն ինչ արել են՝ կիրառելով առաջադեմ տեխնոլոգիաները, որպեսզի շինարարական աշխատանքները լինեն հնարավորինս էժան, բացի այդ ՀՄԿ-ն չի սահմանափակում համայնքների իրավունքը այդ համաֆինանսավորման գումարների տրամադրման համար դիմելու տարբեր ՀԿ-ների և դոնոր կազմակերպությունների:

ՀՄԿ-ի կողմից 15 տոկոս համաֆինանսավորման նպատակն այն է եղել, որ գյուղացին գնահատի կառավարության կողմից 85 տոկոս ֆինանսական ռեսուրսների հատկացման արժեքը և սեփականատիրական զգացումով ու հոգածությամբ վերաբերվի ջրագծերի նկատմամբ:

Ալեքս Ռասինը հիշեցրեց նաև, որ Համաձայնագրի շուրջ բանակցությունների ընթացքում խոսք էր գնում 30 տոկոս համաֆինանսավորման մասին, որը կառավարության առաջարկով Համաձայնագրի ստորագրումից առաջ իջեցվեց 15 տոկոսի:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց** հաստատել «Երրորդ կարգի ջրանցքների վերականգնում (Փաթեթ I)» IA/CB/CW-08/004 պայմանագրի նախագիծը:

Հարցերի սպառումից հետո նիստն ավարտվեց:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ,
«ՀԱՋԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ»
ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

Նիստն արձանագրեց՝
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու,
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման Խորհրդի քարտուղար
Ն. Մարտիրոսյանը